

## Բացօթյա Սարքավորումների Վարձակալության Ծառայությունների Վերաբերյալ Արձանագրություններ

**Վերջին փոփոխությունները** (Փոփոխությունները նշված են դեղինով)

**12/3/2020:**

- Խցիկներում աշխատող աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն՝ ներառյալ միջնապատերով հագեցած խցիկներում: Սա ժամանակավոր միջոց է՝ համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒԻ ժամանակավոր ՅՐԱՄԱՆԻ, որը տրվել է 2020 թ.-ի Նոյեմբերի 28-ին: Պահանջը ուժի մեջ է 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12:01-ից (PST) մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 11:59-ը (PST):
- Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն և հնարավորության դեպքում դա անեն դրսում: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը:
- Հաճախակի հալման ենթարկվող մակերեսները ամեն ժամ ախտահանվում են:
- Աշխատակիցների և հաճախորդների զննումը պետք է ներառի այն հարցը արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը ընդունում է փուլային մոտեցում՝ գիտության և հանրային առողջապահության փորձագիտական աջակցությամբ՝ թույլ տալու որոշ բիզնեսների անվտանգ վերաբացվել: Ստորև բերվող պահանջները նախատեսված են բացօթյա սարքավորումների վարձակալություն առաջարկող բիզնեսների համար: Այս վարձակալությունները պետք է սահմանափակվեն միայն տրանսպորտային և /կամ ֆիզիկական գործունեությամբ, ինչպիսիք են՝ կայակները, թիավարվող նավակները, թղթե օդապարիկները, Էլեկտրական մոտորանավակների վարձակալությունը և հեծանիվները: Վարձակալություն առաջարկող ընկերությունները պետք է համապատասխանեն Բացօթյա Սարքավորումների Վարձակալության Ծառայությունների համար նախատեսված ստուգաթերթի ներկայացված պահանջներին:

Ընկերությունները, որոնք առաջարկում են ինքնասպասարկման տարբերակով վարձակալություններ պետք է համապատասխանեն սույն ուղեցույցի ներքևում գտնվող ինքնասպասարկման բաժնում նշված լրացուցիչ պահանջներին:

Խնդրում ենք նկատի ունենալ, այս փաստաթուղթը կարող է փոփոխվել՝ կախված լրացուցիչ տեղեկատվության և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է.

- (1) Աշխատավայրերի քաղաքականությունն ու գործելակերպը՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը
- (2) Ֆիզիկական հեռավորություն ապահովելու միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովելու միջոցառումներ

- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Կարևոր ծառայությունների համար անաչառ հասանելիության միջոցառումներ

Պետք է անդրադառնալ այս հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակի վերաբացման ցանկացած արձանագրություն:

**Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:**

Բիզնեսի անուն՝

---

Հաստատության հասցե՝

---

Թողարկման ամսաթիվ՝

---

**A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂԴՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՉՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Յուրաքանչյուր ոք, ով կարող է տնային պայմաններում կատարել իր աշխատանքային պարտականությունները, պետք է հանձնարարվի այդպես անել:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր անձինք և խրոնիկական հիվանդություններ ունեցողները) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է տնից կատարել:
- Բոլոր աշխատակիցներին զգուշացվել է աշխատանքի չգալ եթե հիվանդ են և հետևել Հանրային Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման ուղեցույցին, եթե կիրառելի է:
- Աշխատակիցներին տրամադրվել է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների վերաբերյալ, որն աշխատողը հնարավոր է իրավունք կունենա ստանալ, ինչն էլ ֆինանսապես ավելի կհեշտացնի նրա տանը մնալը: Տե՛ս հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և [COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման ծրագրերի](#), ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Ընտանիքների Կորուսվորուսին Առաջին Արձագանքի Օպերի Ներքո](#), և աշխատակիցների համար աշխատողների փոխհատուցման կանխավճարներ ստանալու իրավասության և COVID-19-ին առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները համաձայն՝ Նահանգապետի [N-62-20 Գործադիր Կարգի](#):
- Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների հետ համընկնող ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն՝ հանձնարարելու «հիվանդ(ներ)ին» մեկուսանալ տանը, ինչպես նաև պահանջելու, որ բոլոր աշխատակիցները, ովքեր աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե

արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:

- Մինչև աշխատակիցների մուտքն աշխատավայր իրականացվում է [աշխատակիցների ախտահիշների ստուգում](#): Ստուգումը պետք է ներառի հազի, շնչարգելության, ջերմության կամ աշխատակցի մոտ դրսևորվող ցանկացած այլ ախտահիշների դիտարկում, և **հարցում արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո**: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակման դեպքեր բացահայտելու դեպքում, գործատուն պետք է գեկուցի այս խմբի վերաբերյալ Հանրային Առողջապահության Վարչություն՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարով: Եթե աշխատավայրում վարակված խումբ հայտնաբերվի, Հանրային Առողջապահության Վարչությունը կնախաձեռնի խմբի նկատմամբ արձագանք, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Վարակված խմբի հետազոտման գործով կնշանակվի Հանրային Առողջապահության գործի կառավարիչ՝ օգնելու ուղորդել հաստատության արձագանքը:
- Բոլոր այն աշխատակիցներին, որոնք իրենց հերթափոխ(ներ)ի ընթացքում շփում ունեն հանրության կամ այլ աշխատակիցների հետ, առաջարկվում են անվճար կտորե դիմակներ: Աշխատակիցը պետք է աշխատանքային օրվա ողջ ընթացքում կրի դիմակը, երբ շփվում է կամ կարող է շփվել այլ մարդկանց հետ: Մասնավոր գրասենյակներում կամ միջնապատերով առանձնացված աշխատատեղերում միայնակ գտնվելիս՝ աշխատակիցներից չի պահանջվում կտորե դիմակ կրել:
- Համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ՝ COVID-19-ի ՎԵՐԱՅՍԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐԳ 1 ՆԾԱՆԱԿԱԼԻ ԱՐՁԱԳԱՆԵԸ, որը տրվել է 2020թ.-ի Նոյեմբերի 28-ին, բոլոր աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը կատարվել է աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողների համար, փոխարինվում է ժամանակավոր հրամանի գործող ժամանակահատվածում՝ 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12: 01-ից (PST) մինչև 2020թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 23:59-ը (PST):
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերը, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում:
- Աշխատակիցներին հանձնարարվում է իրենց դիմակները լվանալ ամեն օր:
- Գործատուները պետք է որոշեն, թե որ դեպքում օգտակար կլինի աշխատակիցներին մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ տրամադրել՝ ի հավելում ձեռքերը հաճախակի լվանալուն կամ ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործելուն: Օրինակ՝ այն աշխատակիցներին, ովքեր ստուգում են մյուսների մոտ ախտահիշների առկայությունը կամ գործ են ունենում հաճախակի հպվող առարկաների հետ:
- Աշխատակիցների համար սահմանվել են փոփոխված աշխատանքային ժամերի սկիզբ և կիսված հերթափոխեր՝ սահմանափակելու աշխատակիցների թիվը աշխատավայրում,

Խմբակային հանդիպումների ընթացքում, ճաշի ընդմիջումների և հեռանալու ժամանակ: Ոչ մեկի չի թույլատրվում խմբերով հավաքվել:

- Աշխատակազմի հանդիպումներն անցկացվում են բացօթյա տարածքներում՝ ֆիզիկական հեռավորությունը պահպանելու համար:
- Չի թույլատրվում այցելուների կամ վաճառքի ներկայացուցիչների մուտքը հաստատություն: Սա ներառում է արտաքին բաշխիչների և արտադրողի ներկայացուցիչներին: Հանդիպումներն անց են կացվում հեռախոսով, zoom-ով կամ այլ վիրտուալ հարթակով:
- Հնարավորության դեպքում դադարեցվում է աշխատակիցների ժամերը գրանցող սարքերի կիրառումը:
- Աշխատակիցներից պահանջվում է և բավարար ժամանակ է տրամադրվում 30 րոպե՝ մեկ կամ ըստ անհրաժեշտության ձեռքերը լվանալու կամ ախտահանելու համար: Պահոց սենյակներից հանվել են բոլոր անձնական իրերը: Լրացուցիչ համազգեստները, պարագաները և բոլոր իրերը կարելի է պահել անձնական մեքենաների մեջ: Աշխատավայրում չի թույլատրվում անձնական իրեր պահելը:
- Ընդմիջման սենյակի ընդհանուր օգտագործման իրերի (օր.՝ սրճամաններ, սննդի մեքենաներ, սառնարաններ և միկրոալիքային վառարաններ) օգտագործումը դադարեցվել է: Սննդի/անձնական խմիչքների համար առաջարկվում է օգտագործել անձնական հովացուցիչներ, և դրանք հարկավոր է պահել անձնական մեքենաների մեջ:
- Հնարավորության դեպքում ընդմիջումների և ճաշելու համար հավելյալ տարածք է հատկացվել՝ թույլ տալու ավելի մեծ ֆիզիկական հեռավորության պահպանում:
- Համապատասխան աշխատավարձի և ժամային կարգավորումներին՝ ընդմիջումները կազմակերպվում են այնպես, որ ընդմիջման տարածքներում աշխատակիցների միջև ամբողջ ընթացքում հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Հնարավորության սահմաններում՝ յուրաքանչյուր աշխատողին հատկացվում է իր սեփական գործիքները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Իրերի համատեղ օգտագործումը նվազագույնի է հասցված կամ վերացված է:
- Իրենց հերթափոխերի ընթացքում աշխատողներին ժամանակ է տրամադրվում մաքրման գործընթացները իրականացնելու համար: Մաքրման հետ կապված հանձնարարությունները նշանակվում են աշխատանքային ժամերին՝ որպես աշխատակիցների աշխատանքային պարտականությունների մաս:
- Դեկավարությունը կսահմանի հաստատության օրեկան մաքրման ցուցումներ; առավել հաճախակի կմաքրվեն հիմնականի հպման կետերը (դռների բռնակներ, զուգարաններ, սեղաններ, աթոռներ, լվացարաններ, համակարգիչներ/ստեղնաշարեր և այլն):
- Բոլոր աշխատակազմայինները բաժանված են առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ:
- Բոլոր աշխատակիցներին հրահանգվել է խանութի բոլոր տարածքներում հաճախորդներից և միմյանցից առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն պահպանել: Աշխատակիցները կարող են ակնթարթորեն մոտենալ, երբ անհրաժեշտ է ստանալ վճարումը, ապրանքներ կամ ծառայություններ մատուցել կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- Հաճախորդներին չի թույլատրվում օգտվել աշխատակիցների համար նախատեսված զուգարաններից:
- Բաշխման տարածքները, (մայթերից վերցնելու պայմանով), ընդմիջման սենյակները, զուգարանները և այլ ընդհանուր տարածքները **ամեն ժամ** ախտահանվում են՝ հետևյալ ժամանակացույցով.
  - Բաշխման տարածք \_\_\_\_\_

- Ընդմիջման սեկյակներ \_\_\_\_\_
- Չուգարաններ \_\_\_\_\_
- Այլ \_\_\_\_\_
- Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ \_\_\_\_\_
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում: \_\_\_\_\_
- Այս Արձանագրության կրկնօրինակը բաժանվել է բոլոր աշխատակիցներին:
- Այս ստուգաթերթիկում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի նրանցից, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են տվյալ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրել այլ միջոցառումներ՝ \_\_\_\_\_

**B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Վարձակալվող ապրանքները պետք է ընդունվեն և հանձնվեն աշխատակցի կողմից: Աշխատանքային ժամերի ընթացքում աշխատակիցներ պետք է ներկա լինեն, որպեսզի ախտահանեն վարձակալվող ապրանքները վարձակալումների/հաճախորդների օգտագործումների միջև: Ինքնասպասարկման տարբերակով վարձակալությունները պետք է համապատասխանեն ստորև նշված ինքնասպասարկման բաժնում նշված սահմանափակումներին:
- Միայն մեկ աշխատակից է անհրաժեշտ նավակը շահագործելու համար, իսկ անձնակազմի մեկ լրացուցիչ անդամ թույլատրվում է վարձակալված մեքենաների վրա, երբ դրանք օգտագործվում են հաճախորդների կողմից: Հարկավոր է պահպանել ֆիզիկական հեռավորություն սպասարկողների/աշխատակիցների և հաճախորդների միջև:
- Եթե վարձակալված մեքենայի վրա ներկա է սպասարկող աշխատակից, հաճախորդը և սպասարկողը պետք է կտորե դիմակներ կրեն, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդները զբաղվում են ֆիզիկապես միմյանցից հեռու վարժանքներով:
- Խմբային հավաքներն արգելվում են, իսկ նստարաններն ու սեղանները հեռացվել կամ մի կողմ են դրվել, որպեսզի խուսափեք վարձակալման գրասենյակի դիմաց հավաքներից:
- Այնպիսի ապրանքների վարձակալումը, երբ բազմաթիվ մարդիկ կարող են գործածել միևնույն սարքավորումը, (օր` կայակներ, լաստանավակներ, մոտորանավակներ, հեծանիվներ) սահմանափակվում են միայն անհատների կամ նույն ընտանեկան տնտեսության անդամների համար: Արգելվում է ապրանքների ընդհանուր օգտագործումը անհատների կողմից, ովքեր նույն ընտանեկան տնտեսության անդամներ չեն հանդիսանում:
- Խրախուսեք վճարումը նվերի, դեբիտ կամ վարկային քարտերով:
- Նշաններ կամ գծանշաններ են արվել՝ ստեղծելու 6 ոտնաչափ հեռավորությամբ պատնեշ, որպեսզի նվազագույնի հասցվի աշխատակիցների և հանրության հետ շփումը:
- Ամրագրումները 10 րոպեից ոչ պակաս ընդմիջումներով են: Հաճախորդներին առաջարկվում է գալ հաստատություն վարձակալության սկսվելու ակնկալվող ժամանակից ոչ ավելի, քան 10 րոպե առաջ:
- Մանրածախ վաճառքները կամ վարձակալությունները նախատեսված են միայն դռնից \_\_\_\_\_

վերցնելու տարբերակով: Բոլոր ապրանքների վաճառքները վերջնական են: Հաստատության դմները բոլոր հնարավոր տեղերում ավտոմատ բացվում են:

- Հաճախորդներից պահանջվում է անմիջապես հեռանալ տարածքից՝ վարձակալության ժամանակը լրանալուց հետո: Ավտոմեքենաների կայանատեղում չի թույլատրվում համախմբվելը կամ միմյանց շտապեցնելը:
- Վարձակալվող սարքավորումների հետ կապված ցանկացած ուսուցում կամ բացատրություն պետք է կատարվի տեսանկարահանմաբ, կամ աշխատակիցը պետք է 6 ոտնաչափ հեռու լինի հաճախորդներից:
- Պահանջեք, որ այն հաճախորդները, ում աշխատանքային պարտականությունները պահանջում են այլ աշխատակիցների և/կամ հանրության հետ սերտ շփում, կտորե դիմակներ կրեն:
- Վճարման կայաններում ձեռնարկվել են միջոցառումներ, օրինակ՝ օրգանական ապակուց պատնեշների տեղադրումը՝ գանձապահի և հաճախորդների միջև նվազագույնի հասցնելու վարակի հնարավորությունը:

### C. ՎԱՐՎԿԻ ՎԵՐԱՀՅՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Յուրաքանչյուր վարձակալվող սարքավորում ամեն օգտագործումից հետո, պետք է ամբողջովին սրբվի COVID-19-ի դեմ արդյունավետ ախտահանիչ նյութով:
  - Ձեռքերի ախտահանման միջոցներ, օճառ ու ջուր կամ արդյունավետ ախտահանիչ թաց անձեռոցիկներ հասանելի են հաճախորդներին հաստատության մուտքի մոտ, զուգարաններում, հիմնական շփման այլ տեղերում:
  - Աղբամանները առանց հպման են: Կափարիչները հեռացվել են, եթե առկա են:
  - Բոլոր զուգարանները **ամեն ժամ** ախտահանվում և սպասարկվում են: Հնարավորության դեպքում, դմները ավտոմատ են բացվում՝ դմների բռնակների կամ մակերեսների հպումը նվազագույնի հասցնելու համար:
  - Ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգը պատշաճ աշխատանքային վիճակում է, իսկ օդափոխությունն առավելագույնս բարելավվել է: Կարող եք տեղադրել բարձր արդյունավետության շարժական օդային գոտիչներ, արդիականացնել շինության օդային ֆիլտրերը և կատարել այլ փոփոխություններ՝ մեծացնելու գրասենյակներում և այլ տարածքներում արտաքին օդի քանակը:
  - Առկա են առանց հպման վճարման համակարգեր, իսկ դրանց բացակայության դեպքում վճարման համակարգերը կանոնավոր կերպով ախտահանվում են: Նկարագրել՝
- 
- Աշխատավայրերը և ամբողջ հաստատությունը մաքրվում է առնվազն օրական մեկ անգամ, իսկ զուգարաններն ու հաճախակի հպվող տարածքները/հրերը **ամեն ժամ** մաքրվում են:
  - Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցնում են , որ հաստատությունում կամ հաստատության տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում նրանք պետք է դեմքի ծածկույթ կրեն (բացառությամբ ուսելու կամ խմելու ժամանակ, եթե կիրառելի է): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և բարձր երեխաներին: Միայն այն անձիք, ովքեր բժշկական մատակարարի կողմից հանձնարարվել է չկրել դեմքի ծածկույթ, ազատվում են այն կրելուց: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար դեմքի ծածկույթը պետք է մատչելի դարձնել այցելուներին, ովքեր ժամանում են առանց նրանց:
  - Ախտանիշների ստուգումն իրականացվում է, նախքան այցելուները կարող են մուտք գործել հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, **և հարցում արդյոք անհատը գտնվում է**

**ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:** Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար, անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված **նշաններով**, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:

- Խմելու ջրի ցայտադրյալները և սառեցնող սարքերը հանվել են կամ ծածկված են:
- Հնարավորության դեպքում տեղադրվել են առանց հպման սարքեր, ներառյալ՝ սենսորային ցուցիչով լույսերը, առանց հպման վճարային համակարգերը, օճառի և թղթե սրբիչների ավտոմատ դիսպենսերներ և ժամանակը գրանցող սարքեր:
- Ձեռքերի ախտահանման միջոցներ, անձեռոցիկներ և աղբամաններ հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում:
- Բոլոր վճարման միջոցները, գրիչները և ստիլուսները ախտահանվում են **ամեն ժամ**:
- Լրացուցիչ (ընտրովի)-Նկարագրել այլ միջոցառումները (օր.՝ միայն տարեցների համար նախատեսված ժամեր, ոչ-գրադված ժամերին վաճառքի խրախուսում):

#### D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն փակցվում է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Նշաններ մուտքի մոտ և/կամ այն վայրում, որտեղ հաճախորդները շարք են կանգնում, որոնք կտեղեկացնեն հաճախորդներին նախապես պատվիրելու և վճարելու տարբերակների վերաբերյալ:
- Ցուցումներ տվող և տեղեկատվական նշաններ են տեղադրված ողջ հաստատության տարածքում կապված վարակի վերահսկման, ֆիզիկական հեռավորության և կտորե դիմակ օգտագործելու վերաբերյալ, ներառյալ.
  - Նշաններ տեղադրել հաստատության արտաքին մասում և վաճառքի կետում՝ մարդկանց հիշեցնելով առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանել, ներառյալ՝ նաև հերթերի մեջ կանգնելիս:
  - Հաստատության ներսում և/կամ հանրային մուտքերի մայթերին/դրսի տարածքներում միմյանցից 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ կանոն ժապավեն և այլ նշումներ փակցրեք, ինչպես նաև նշաններ, որոնք հաճախորդներին կուղղորդեն օգտագործել գծանշանները առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելու համար:
- Հաստատության առցանց վաճառքի պորտալները (վեբ կայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկատվություններ են տրամադրում հաստատության ժամերի, կտորե դիմակների օգտագործման անհրաժեշտության, վերաբացման արձանագրության, նախապես պատվիրելու, ամրագրման, պատվերի համար նախապես վճարելու, վերցնելու կամ առաքման քաղաքականությունների և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ:
- Իրականացվում է ընկերական, բայց լուրջ հաղորդակցություն պահանջվող անվտանգության արձանագրությունները խախտող ցանկացած հաճախորդի հետ: Հաճախորդներին հիշեցվում է, որ Ֆիզիկական Հեռավորության Պահպանման Արձանագրությունների ցանկացած խախտում վտանգի տակ է դնում բացօթյա հանգստի վարձակալական ծառայությունների տեղական ձեռնարկությունների շարունակական գործունեությունը:

**E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են հնարավոր:

**F. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Հաճախորդներին պետք է տեղեկացնել, որ նրանք պատասխանատու են վարձակալած ցանկացած սարքավորման ախտահանման համար՝ մինչև օգտագործելը մակերեսները սրբելով [EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներով](#):
- Վարձակալությամբ զբաղվող ընկերությունը պատասխանատու է վարձակալվող բոլոր սարքավորումների լրացուցիչ հաճախակի մաքրման և ախտահանումների համար: Սա պետք է իրականացվի հնարավորության դեպքում ամեն օր:

**Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված այստեղ, կարող են նշվել առանձին էջի վրա, և հաստատությունը պետք է կցի այս փաստաթղթին**

**Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցերի դեպքում, դուք կարող եք դիմել հետևյալ անձին.**

**Հաստատության  
անունը**

**Հեռախոսահամարը**

**Արձանագրության  
վերջին  
վերանայման  
ամսաթիվը:**